

6.

Սարգիս ի վենետիկ. Հոռոմ երթալու պատրաստութիւնք. առ Մխիթար Աբբայ զբաժ ինը նամակներուն օրինակները. Սարգիս ի Հոռոմ Հոկտ. 1745-1747. 1745 Նոյ. 20ին Հաւատոյ դաւանութիւն կուտայ, կը ներկայանայ Քննեղ. Ժ.Ի. Բաշանայապետին: Վրթանէս վ. Ստեփաննաս, Արքեպ. Կեսարիոյ, Չեռնաղործ ի Հոռոմ, կենսագրութիւնը: Զէյթունցի Ստեփ. Եպ. Սաչը, եւ Զէյթունցի Կարապետ. Եպ. Առաջնորդը Գաղատիոյ: Կաթողիկէութեան սկիզբն ի Գաղատիա: Գր. Արքեպ. Եղեսիոյ եւ Հ. Յովս. վ. Ստեփաննաս, Արքեպ. Եղեսիոյ ի Հոռոմ. Հ. Մկրտիչ վ. Անաննաս: Սարգիս ի Հոռոմ ձեռնադրութիւններ կը կատարէ, Սրբացուցման ժողովոյ մէջ կը գտնուի: Յովս. վ. Դասապաս, Արքեպ Մէրտինի. Ակնցի Մինաս վ. Փերուագեան, Արքեպ. Զմիւռնիայ կաթողիկեայ: Սարգիս Արքեպ. ի վենետիկ. տպարան կը հաստատէ եւ 18 կտոր գիրք կը տպագրէ. Սահակ Արքեպ. Անագին: Սարգսի տպարանն ի Կ. Պոլիս, եւ Նոյնին երկրաշարժի ատեն փլատակներու տակ մնալը: Սարգիս 1769ին ի Կ. Պոլիս կը հրատարակէ «Ժաղողցիկ»: Սարգիս ի Հոռոմ, Լիվոնոյ եւ Զմիւռնիա:

Սարգիս Արքեպ. 1744ին ամառուան վերջերն վենետիկ հասաւ, եւ տեղւոյն կաթողիկեայ Հայերէն սիրալիր ընդունելութիւն գտաւ, եւ տեսնելով որ ամէնքն ուղղափառ են, մեծապէս ուրախացաւ: Շատ կը հրճուէր՝ երբ Ս. Ղազարու վանքն երթար, « զոր դեռ տընտեսէր զերթ քաջ Արբայ հայր յոգնիմաստ, 'ւարդոյ՝ ռարբին Մըխիթար:

Մխիթար Արբաճօր հետ կենակցելով եւ Միաբաններէն շատ սէր եւ մեծ շուք գտնելով՝ շատ կ'ուրախանար եւ կը մխիթարուէր, եւ զայս մեծ գոհութեամբ կը յիշէր մինչեւ կենացը վերջը: վենետիկ էր նաեւ Յովհաննէս Սեպուհ